

**<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՍ
ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ**

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



2022-2023

Ն Ե Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

**Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը:
2. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման նպատակն է.
ա/հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության միասնականության ապահովմանը, հանրակրթության որակի բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելը,
բ/ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորումը,
գ/շահառուների՝ սովորողների և նրանց ծնողների, դպրոցի մանկավարժական աշխատողների, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Երևանի քաղաքապետարանի, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների իրազեկվածության աստիճանի բարձրացումը,
դ/ուսումնական հաստատությունների հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստելը:
3. Ներքին գնահատումն ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է:
4. Ներքին գնահատումը իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և նրանց ծնողները:
5. Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական կայքում:
6. Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1334-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին» N 1334-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ / 23 Հոկտեմբեր 2014, 1146 – Ն / առաջնորդվելով ուսումնական հաստատության ներքին գնահատման չափանիշների հաշվարկման մեթոդաբանությամբ և հաշվետվության պատրաստման ԿԳ նախարարության կողմից ՀՀ ԿԳ նախարարի 26.02.2015թ. №110-Ա/Ք հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին գնահատումը» ուղեցույցի համապատասխան:

<<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ներքին գնահատմանը մասնակցել են դպրոցի վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները):

Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրեն Ա.Նազարյանը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացրել է ուսումնական հաստատության կառավարման խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովել դրա հրապարակումը հանրապետական մամուլում և ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում) :

Ներքին գնահատումն իրականացվել է սահմանված կարգով ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից:

Տնօրեն Ա.Նազարյանը որպես հանձնաժողովի նախագահ ապահովել է հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Հանձնաժողովը հաստատված իր աշխատակարգով, սահմանել է ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիր, մեթոդներ և ժամանակացույց:

Ներքին գնահատման արդյունքում հանձնաժողովի նախագահը պատրաստել է ներքին գնահատման հաշվետվությունը՝ ըստ նախարարության սահմանած ձևի:

Հաստատության ներքին գնահատման հաշվետվության պատրաստման համար հիմք են հանդիսացել հաստատության ներքին գնահատման ցուցանիշները և չափանիշները, հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից հաստատության գործունեության այս կամ այն ոլորտի վերաբերյալ տրված գնահատումները: Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացում ներառվել է երեք բաղադրիչ՝

1. մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում.

2. գործունեության ընթացիկ գնահատում.

3. գործունեության արդյունքների գնահատում:

Բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվել է ըստ հաստատության գործունեությունը նկարագրող հետևյալ ոլորտների՝

- ✚ հաստատության անվտանգություն,
- ✚ հաստատության գործունեության արդյունավետություն և ուսումնական գործընթացի որակ,
- ✚ հաստատություն կողմից ներառական կրթության և հավասարության ապահովում,
- ✚ համայնքային մասնակցություն,
- ✚ վիճակագրական տվյալների վերլուծություն,
- ✚ փաստաթղթային վերլուծություն,
- ✚ դիտարկում և փաստագրում,
- ✚ հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն:

Հաշվետվությունը բաղկացած է 6 մասից՝

- ✓ ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին,
- ✓ հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը,
- ✓ հաստատության գործունեության արդյունավետություն,
- ✓ հաստատությունում ներառական կրթությունը և հավասարության ապահովումը,
- ✓ համայնքային մասնակցությունը,
- ✓ հաստատության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները:

Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը`

«ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Հաստատության հասցեն`


0801, ՀՀ Արարատի մարզ ք.Մասիս Դպրոցականների 1

Հաստատության հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն`

(+374 236) 4-26-02 masis2@schools.am

| Դասարանների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|-------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|--|
| 1-ին դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 2-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 3-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 4-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 5-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 6-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 7-րդ դասարան | 4 | 4 | 4 | պահպանվել է թվաքանակը |
| 8-րդ դասարան | 3 | 4 | 4 | աճ |
| 9-րդ դասարան | 3 | 3 | 3 | պահպանվել է թվաքանակը |
| Ընդամենը | 33 | 34 | 35 | կայուն |

Աղյուսակ 1. Ղասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար




Նկատառում. տարրական դասարանների աշակերտների քանակի աճի հաշվին նկատվում է դասարանների թվաքանակի աճ: Աճը պայմանավորված է դպրոցում կրթության կազմակերպման բարձր մակարդակով, որակյալ ուսուցչական կազմով, ներառականության ապահովմամբ, ուսումնական ծրագրերի լիարժեք իրագործմամբ:

Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է նախագծային հզորությանը, տարրական և հիմնական կրթության դասարանները կոմպլեկտավորված են մինչև 35 աշակերտ սահմանային խտությամբ, այդ պատճառով առաջնահերթ է նոր դասասենյակի և նոր գույքի ավելացման խնդիրը: Գալիք ուսումնական տարում սովորողների թվի աճի հետ կապված անհրաժեշտություն կա դասասենյակների շինարարական վերանորոգման աշխատանքների և դպրոցական կահույքի ձեռքբերման:

Աղյուսակ 2. Ըստ դասարանների սովորողների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Սովորողների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|-------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|--|
| 1-ին դասարան | 112 | 111 | 113 | աճ |
| 2-րդ դասարան | 113 | 112 | 112 | աճ |
| 3-րդ դասարան | 111 | 110 | 112 | աճ |
| 4-րդ դասարան | 112 | 110 | 109 | աճ |
| 5-րդ դասարան | 111 | 108 | 107 | աճ |
| 6-րդ դասարան | 111 | 112 | 108 | կայուն |
| 7-րդ դասարան | 93 | 108 | 109 | աճ |
| 8-րդ դասարան | 101 | 90 | 107 | աճ |
| 9-րդ դասարան | 81 | 92 | 97 | աճ |
| Ընդամենը | 945 | 958 | 967 | Աճի դինամիկա |

Աշակերտների թիվը



Վերլուծություն. 2022-2023 ուստարում ևս սովորողների թվի աճ է նկատվում, դա նշանակում է, որ հիմնական դպրոցը զարգացման ծրագրով սահմանված առաքելությունը, նպատակները և իր առջև դրված խնդիրները ճիշտ է կատարում, և ունի հեղինակություն Մասիս համայնքում:


Կրթության բովանդակությունը, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական ծրագրերով, ուսումնական պլաններով, արտացոլված է ուսումնամեթոդական նյութերում և ուղղված էր սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը, վերջնարդյունքների ապահովմանը, սովորողների առողջության պահպանման, իրավախախտումների կանխարգելման և սեռերի իրավահավասարության, ինչպես նաև խաղաղության պահպանմանն ուղղված գիտելիքների ու հմտությունների զարգացմանը, արտակարգ իրավիճակներում անվտանգության պահպանմանը:

Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Ցուցանիշը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|--|--------------------------|--------------------------|--------------------------|--|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա հոկտեմբերի 5-ի դրությամբ | 952 | 965 | 958 | Աճ |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 945 | 958 | 967 | Աճ |

| | | | | |
|--|----|----|----|----|
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 15 | 17 | 21 | Աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 25 | 32 | 26 | Աճ |

Նկատառում. աշակերտների տեղափոխումը հաստատությունից պայմանավորված է եղել ընտանիքների բնակավայրի տեղափոխությամբ կամ այլ երկիր մեկնելով: Դպրոց տեղափոխվող աշակերտների ընդունումը 2022-2023 ուստարում ևս կապված է ըստ լիցենզիայի սահմանային տեղերով, դպրոցի համակազմի խտությամբ:



Նկատառում. վերլուծությունը ցույց է տալիս, որ դպրոցում նկատվում է աշակերտների թվաքանակի կայուն աճ:

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|--|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 50 | 51 | 54 | աճ |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանաբեռնվածությունը կամ դրույքաչափը | դասվար՝ 16,65 մայրենի, հայոց լեզու, գրակ.՝ 20,8 օտար լ.՝ 20,3 մաթեմ., հանր., երկրաչ.՝ 21,2 ֆիզիկա՝ 18 քիմիա՝ 15 կենսաբ.՝ 9 բնագիտ.՝ 16 ինֆորմ.՝ 13 աշխարհ.՝ 19 | դասվար՝ 16,75 մայրենի, հայոց լեզու, գրակ.՝ 20,4 օտար լ.՝ 28,3 մաթեմ., հանր., երկրաչ.՝ 12,8 ֆիզիկա՝ 20 քիմիա՝ 8 կենսաբ.՝ 10 բնագիտ.՝ 16 ինֆորմ.՝ 14 աշխարհ.՝ 20 | դասվար՝ 16,75 մայրենի, հայոց լեզու, գրակ.՝ 21,4 օտար լ.՝ 22,1 մաթեմ., հանր., երկրաչ.՝ 24,48 ֆիզիկա՝ 22 քիմիա՝ 18 կենսաբ.՝ 12 բնագիտ.՝ 16 ինֆորմ.՝ 15 աշխարհ.՝ 22 | Աճել է ուսուցիչների ծանաբեռնվածությունը և դրույքաչափը, ուսուցիչների միջին ծանաբեռնվածությունը՝ 19,5/19,1 փոխարեն/, մանկավարժական դրույք՝ 45,15 (ուսպլանի ժամերը բաժանած 22-ի՝ 994/22) |

| | հժպ,համաշխ. պատմ.,հ.եկեղ. պատմ.՝22 Երգ՝28 կերպ.՝2,5 տեխնոլ.՝14 ՆԶՊ՝6 Ֆիզկուլտ.՝29 Շախմատ՝12 | հժպ,համաշխ. պատմ.,հ.եկեղ. պատմ.՝23,3 Երգ՝28 կերպ.՝6 տեխնոլ.՝16 ՆԶՊ՝6 Ֆիզկուլտ.՝22,5 Շախմատ՝8 | հժպ,համաշխ. պատմ.,հ.եկեղ. պատմ.՝25 Երգ՝28 կերպ.՝4 տեխնոլ.՝16 ՆԶՊ՝7 Ֆիզկուլտ.՝31 Շախմատ՝8 | |
|---|---|--|--|--|
| Առարկա | Դասաժամեր | Դասավանդող ուսուցիչներ,դասվար | Միջին ծանրաբեռնվածություն | |
| Տարրական կրթություն | 268 | 16 | 16,75 | |
| Մայրենի,հայոց լեզու,գրականություն | 102 | 5 | 21,4 | |
| Օտար լեզու | 170 | 6 | 22,1 | |
| Մաթեմատիկա | 90 | 7 | 24,4 | |
| Ինֆորմատիկա | 14 | 1 | 15 | |
| Երգ | 32 | 1 | 28 | |
| Կերպարվեստ | 12 | 2 | 4 | |
| Աշխարհագրություն | 20 | 1 | 22 | |
| Հայոց եկեղեցու պատմ.,համաշխ. պատմ.,հասարակ., հայոց պատմ. | 70 | 3 | 25 | |
| Ֆիզիկա | 20 | 1 | 22 | |
| Քիմիա | 16 | 2 | 18 | |
| Բնագիտություն | 16 | 1 | 16 | |
| Կենսաբանություն | 20 | 2 | 11 | |
| Տեխնոլոգիա | 16/16 | 2 | 16 | |
| Ֆիզկուլտուրա | 90 | 3 | 31 | |
| ՆԶՊ | 6 | 1 | 7 | |
| Շախմատ | 24 | 3 | 8 | |


Նկատարում. Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության ցուցանիշները պայմանավորված են դպրոցում աշխատող ուսուցիչների թվաքանակով: Ուսումնական հաստատության տնօրենը

ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարել է մանկավարժական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1 արձանագրային N5 որոշմամբ՝ ելնելով Նախարարության հանձնարարականներից, ինչպես նաև դպրոցի, դասարանի պատրաստությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի, տվյալ դեպքում անգլերենի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից: Ուսուցիչների ատեստավորումը ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման և կատարելագործման գործընթաց է, որն իրականացվում է դասընթացների միջոցով: ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N582-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՆԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԻ համաձայն տնօրենը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ 2021-2022 ուսումնական տարվա ատեստավորման ենթակա ուսուցիչների անձնական գործերում, մինչև մայիսի 1-ը կատարել է համապատասխան նշում՝ «ենթակա է ատեստավորման», ուսուցչի հերթական ատեստավորման ժամանակացույցով նախատեսված ժամկետին համապատասխան ներկայացվել են 22/քսաներկու/ ուսուցիչներ, ովքեր ընտրել են երաշխավորված կազմակերպությունների ցանկում ընդգրկված վերապատրաստող կազմակերպություն : 2021-2022 ուսումնական տարում որակավորման առաջին տարակարգ ունեն 7(վեց) ուսուցիչներ և 1(մեկ) ստեղծագործ, վաստակավոր, որակավորման երկրորդ տարակարգ ունեցող ուսուցիչ:


Դպրոցում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվել է մրցութային հիմունքներով՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 16-ի N06-Ն հրամանով սահմանված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցութի օրինակելի կարգի» և դպրոցի կանոնադրության: 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մրցութային կարգով դպրոցը համալրվել է 5/հինգ/ մանկավարժով: Տարբեր հաստիքներում նշանակումներ կատարվել են համաձայն հաշվի առնելով ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի N525-Ն որոշմամբ սահմանված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերը»: Դպրոցի աշխատակիցներին ներկայացվել են հիմնական պահանջները, որոնք ներկայացվում են աշխատողին մասնագիտական գիտելիքների, օրենսդրական, նորմատիվ ակտերի, հրահանգների և այլ փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև մեթոդներն ու միջոցները, որոնք պետք է աշխատողը կարողանա կիրառել պաշտոնային պարտականությունները կատարելիս:

Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

| Ուսուցիչների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|--------------------|-------------------|-------------------|-------------------|---|
| Մինչև 30 տարեկան | 5 | 5 | 5 | պահպանվել է |
| 31-ից 40 տարեկան | 15 | 17 | 17 | աճ |
| 41-ից -50 տարեկան | 16 | 17 | 17 | աճ |
| 51-ից -59 տարեկան | 9 | 9 | 9 | աճ |
| 60 տարեկան և ավելի | 12 | 12 | 12 | աճ |



Ուսուցչական համակազմ



- մանկավարժների թիվ
- ուսուցիչների թիվ
- պարտադիր ատեստավորվող
- կամավոր ատեստավորված
- տարակարգ

Աղյուսակ 6. Տվյալներ հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

| Անունը, ազգանունը, հայրանունը | Պաշտոնը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|-------------------------------|---------|---|--|---|
| Նազարյան Արևհատ Դմիտրիի | Տնօրեն | 8տարի | 28 | <<Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ>> շնորհակալագիր, <<Հայաստանի հաղթանակ-70>> շարադրությունների մրցույթի շնորհակալագիր, Մասիսի Զինկոմի կողմից շնորհակալագիր: Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցում առավելագույնս նպաստելու համար պատվոգիր ՀՀ Արարատի |

| | | | | |
|-----------------------|------------------------------|---------|----|---|
| | | | | մարզպետի կողմից: |
| Հասմիկ Ներսիսյան | Ուս.աշխ.գծով տնօրենի տեղակալ | 1 | 25 | Որակավորման առաջին տարակարգ |
| Գայանե Գաջիյան | Ուս.աշխ.գծով տնօրենի տեղակալ | 1 | 25 | |
| Բաբայան Թամարա Նորիկի | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ | 12 տարի | 44 | ՀՀ վարչապետի հուշամեդալ, ՀՀ ԿԳ նախարարի պատվոգիր <<Մեք բանակը 20 տարեկան է>> շարադրությունների մրցույթ կազմ. համար: |

Կարծիք. Դպրոցում գործում է կառավարման խորհուրդ 8 անդամներից կազմված: Խորհրդի գործունեությունը բաց է, կայացված որոշումները կրում են կոլեգիալ բնույթ: Խորհրդի առջև լուրջ խնդիրներ է դրված՝ արհեստավարժորեն մոտենալ դպրոցի բյուջեի կազմման և ուսումնադաստիարակչական աշխատանքներին՝ նոր ֆինանսավորման փոփոխման արդյունքում հիմնական դպրոցում սպասվելիք խնդիրների լուծման նպատակով:

Մաս 2. Հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

Հաստատության գործունեության լիարժեք, գնահատման գործընթացը ներառել է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլ նաև ուսուցիչների, վարչական ու սպասարկող անձնակազմի համար աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմաններ ապահովելուն: Հաստատության ներքին գնահատման գործընթացում անվտանգության ապահովմանը և առողջության պահպանմանը վերաբերող ցուցանիշների և չափանիշների ներառումը ենթադրում է, որ հաստատությունը գնահատել է սովորողների և աշխատակազմի ֆիզիկական և հոգեկան առողջությանը ու անվտանգությանը սպառնացող առկա և հնարավոր վտանգները, միաժամանակ քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Հաստատությունում սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության և առողջության պահպանման գնահատման չափանիշների դիտարկման արդյունքները բերվում են ստորև:

| <i>Չափանիշ</i> | <i>Նշում համապատասխան իրավիճակի մասին</i> |
|--|---|
| Հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: | Ցանկապատը մասամբ փլուզված է, սակայն դպրոցը միջոցներ է ձեռք առնում, նորոգում է, մինչույն ժամանակ պահակային ծառայությունը հսկում է 24-ժամյա ռեժիմով և սովորողների համար անվտանգությունը ապահովված է հաստատության ներսում և տարածքում: |
| Հաստատության տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա և/կամ հաստատության շրջակայքում կան բավարար անվտանգ անցումներ (վերգետնյա, ստորգետնյա և այլն): | Այո, տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա, սակայն կա երթևեկելի մաս դեպի դպրոց, վերգետնյա և ստորգետնյա անցուղիները բացակայում են: |
| Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին: | Այո, և՛ երթուղին, և՛ դարպասները բավարար լայնություն ունեն հատուկ ծառայությունների մեքենաների անարգել մուտքի համար: |
| Հաստատության տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում հաստատության տարածքից: | Այո, մաքուր է, աղբահանությունը կանոնավոր է: |
| Հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ: | Այո, և՛ ներսի, և՛ դրսի տարածքում կրծողների և այլ կենդանիների դեմ իրականացվում են ախտահանիչ և ոչնչացնող միջոցառումներ: |

Հաստատությունն իր ներքին գնահատման հաշվետվությունը կազմելիս սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության և առողջության պահպանման գնահատման չափանիշների դիտարկման համար վարել և պահպանել է թղթային ու էլեկտրոնային տարբերակներով ինքնավերլուծության **հատուկ գրանցամատյան**:

Գրանցամատյանի լրացման նպատակով հաստատությունը պարբերաբար իրականացրել է **դիտարկումներ**: Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը նկարագրել է առկա իրավիճակը: Դիտարկումների արդյունքում գնահատման հանձնաժողովը կատարել է իրավիճակի **վերջնական գնահատում**:

Դիտարկում-փաստագրումն իրականացնելիս հաստատությունը առաջնորդվել է համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով, դպրոցի պլան-հատակագծով:

Հաստատության շենքի և դրա շահագործման անվտանգությունը նկարագրող չափանիշները
Դիտարկման ամսաթիվ՝ 23.10.2022թ

Ներքին գնահատման նպատակով ինքնավերլուծության հաշվետվության պատրաստման ժամանակ հաստատության շենքի շահագործման անվտանգությունը նկարագրող չափանիշների համապատասխանության դիտարկում իրականացնելիս հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի ՀՀՇՆ 31-03.01-2014 «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N103-Ն հրամանը,ինչպես նաև «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N2.2.4-016-17 ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ /Հավելված ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանի/:

Հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշները և չափանիշները
Հաստատությունը պահպանում է իր նախագծային հզորությունը.

1. Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերի:
2. Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է նախագծային և սահմանված նորմերին:
3. Հաստատության սովորողները «ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անց են կացնում հաստատության թվով 2/երկու/մարզադահլիճում:

Վերոնշյալ 1-3 կետերի ցուցանիշները և չափանիշները ինքնավերլուծության հաշվետվությունում ներառելիս գնահատման հանձնաժողովը օգտվել է հաստատության շենքի պլան-հատակագծից(կցված է) և դրա հիման վրա կազմված <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>> ներկայացվող ամենամյա հաշվետվությունից, կատարել է շրջայցեր,չափագրման և հաշվառման եղանակով արձանագրել է իրական վիճակը՝ ըստ դասասենյակների նստարանների թվի, գույքի շահագործման նորմերի և այլն:

Աղյուսակ 8. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ՝ **25.02.2023թ**

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև և II-աձև, խառը) | Սեղան-նստարանների թիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները /սմ/ |
|---------------------------|----------------------------------|--|-------------------------------|---|
| Դասասենյակ N5 | 53,4 | Շարքերով | 14/28 | 50 |
| Դասասենյակ N6 | 53,4 | Շարքերով | 15/31 | 50 |

| | | | | |
|--------------------------------|-------|----------|-------|----|
| Դասասենյակ N7 | 37,17 | Շարքերով | 14/28 | 50 |
| Դասասենյակ N8 | 53,4 | Շարքերով | 17/32 | 50 |
| Դասասենյակ N9 | 37 | Շարքերով | 13/25 | 40 |
| Դասասենյակ N10 | 56,8 | Շարքերով | 17/32 | 50 |
| Դասասենյակ N11 | 53,4 | Շարքերով | 16/30 | 50 |
| Դասասենյակ N12 | 53,4 | Շարքերով | 16/32 | 50 |
| Դասասենյակ N13 | 53,4 | Շարքերով | 16/32 | 50 |
| Դասասենյակ N15 | 53,4 | Շարքերով | 16/33 | 50 |
| Դասասենյակ N16 | 53,4 | Շարքերով | 16/33 | 50 |
| Դասասենյակ N17 | 53,4 | Շարքերով | 18/36 | 50 |
| Դասասենյակ N19 | 53,4 | Շարքերով | 16/32 | 50 |
| Դասասենյակ N20 /տեխնոլոգիա/ | 18,25 | Ու-աձև | 9/20 | 80 |
| Դասասենյակ N22 | 53,4 | Շարքերով | 15/31 | 50 |
| Դասասենյակ N23 | 53,4 | Շարքերով | 17/31 | 50 |
| Դասասենյակ N24 | 53,4 | Շարքերով | 16/32 | 50 |
| Դասասենյակ N25 | 53,4 | Շարքերով | 15/30 | 50 |
| Դասասենյակ N26/ԴՀՈՒԿ/ | 53,4 | Ու-աձև | 15/35 | 50 |

| | | | | |
|----------------|-------|----------|-----------------|----|
| Դասասենյակ N28 | 53,4 | Շարքերով | 16/28 | 50 |
| Դասասենյակ N30 | 53,4 | Շարքերով | 17/34 | 50 |
| Դասասենյակ N31 | 37,17 | Շարքերով | 12/27 | 50 |
| Դասասենյակ N32 | 37,17 | Շարքերով | 17/33 | 50 |
| Դասասենյակ N33 | 37,17 | Շարքերով | 14/27 | 50 |
| Դասասենյակ N34 | 53,4 | Շարքերով | 18/36 | 50 |
| Դասասենյակ N35 | 53,4 | Շարքերով | 15/30 | 50 |
| Դասասենյակ N36 | 53,4 | Շարքերով | 15սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N41 | 37,2 | Շարքերով | 11/27 | 40 |
| Դասասենյակ N42 | 56,8 | Շարքերով | 13սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N43 | 56,8 | Շարքերով | 17սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N44 | 56,8 | Շարքերով | 12սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N45 | 56,8 | Շարքերով | 15սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N47 | 36 | Շարքերով | 13/27 | 40 |
| Դասասենյակ N48 | 56,8 | Շարքերով | 18սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N49 | 56,8 | Շարքերով | 17սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N50 | 56,8 | Շարքերով | 17/33 | 50 |

| | | | | |
|----------------|------|----------|--------------------------|----|
| Դասասենյակ N51 | 56,8 | Շարքերով | 16սեղան-նստարան | 50 |
| Դասասենյակ N52 | 36 | Շարքերով | 9/18 3/3սեղան-նստարան | 40 |

Վերլուծություն. Դասասենյակներում սեղանները դասավորված են սենյակի երկարությամբ՝ 3 շարքով, որը թույլ է տալիս ապահովել դասարաններում աշակերտների սահմանային խտությանը համապատասխան կահավորում: Խմբային աշխատանքներ կամ S2S դասեր կազմակերպելիս ուսուցիչները դասավորում են դասասենյակը նախապես, հետևապես կարելի է ասել դպրոցի նախագծային հզորությունը լիովին է գործում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցիչների կողմից իրագործվում են ուսումնական ծրագրերից բխող համագործակցային, նորարարական /ինովացիոն/ մեթոդների օգնությամբ ուսումնական գործընթաց: Համակարգչային սենյակի կահավորումը, համակարգիչներից օգտվելը և դրանց միջոցով իրականացվող ուսումնական գործընթացը վտանգ չի հասցնում երեխաների առողջությանը, պահպանվում են ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. սեպտեմբերի 24-ի N19-Ն հրամանի «Կազմակերպություններում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների(համակարգիչների) անվտանգ շահագործման» N2.2.4-015-10 սանիտարական կանոնների պահանջները:

Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ՝ **27.02.2023թ.**

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավել մակերեսը(քմ) |
|--------------------|---------------------------|------------------------------------|--------------------------------------|
| Դասասենյակ N5 | 53,4 | 2,2 | +0,2 |
| Դասասենյակ N6 | 53,4 | 2,1 | +0,2 |
| Դասասենյակ N7 | 37,17 | 1,42 | -0,58 |
| Դասասենյակ N8 | 53,4 | 1,84 | -0,16 |
| Դասասենյակ N9 | 37 | 1,76 | -0,24 |
| Դասասենյակ N10 | 53,4 | 2,05 | +0,05 |
| Դասասենյակ N11 | 53,4 | 1,97 | -0,03 |
| Դասասենյակ N12 | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N13 | 53,4 | 2,32 | +0,32 |
| Դասասենյակ N15 | 53,4 | 1,72 | -0,28 |

| | | | |
|-----------------------|-------|------|-------|
| Դասասենյակ N16 | 53,4 | 2,05 | +0,05 |
| Դասասենյակ N17 | 53,4 | 2,05 | +0,05 |
| Դասասենյակ N19 | 53,4 | 1,84 | -0,16 |
| Դասասենյակ N20 | 18,25 | 1,4 | -0,6 |
| Դասասենյակ N22 | 53,4 | 1,84 | -0,16 |
| Դասասենյակ N23 | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N24 | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N25 | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N26/ԴՀՈՒԿ/ | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N28 | 53,4 | 1,72 | -0,28 |
| Դասասենյակ N30 | 53,4 | 1,57 | -0,43 |
| Դասասենյակ N31 | 37,17 | 1,42 | -0,58 |
| Դասասենյակ N32 | 37,17 | 1,42 | -0,58 |
| Դասասենյակ N33 | 53,4 | 1,78 | -0,22 |
| Դասասենյակ N34 | 53,4 | 1,52 | -0,48 |
| Դասասենյակ N35 | 53,4 | 1,84 | -0,16 |
| Դասասենյակ N36 | 53,4 | 2,54 | +0,54 |
| Դասասենյակ N41 | 37,2 | 1,77 | -0,23 |
| Դասասենյակ N42 | 56,8 | 1,95 | -0,05 |
| Դասասենյակ N43 | 56,8 | 1,77 | -0,23 |
| Դասասենյակ N44 | 56,8 | 1,83 | -0,17 |
| Դասասենյակ N45 | 56,8 | 2,02 | +0,02 |
| Դասասենյակ N47 | 36 | 1,8 | -0,2 |
| Դասասենյակ N48 | 56,8 | 1,67 | -0,33 |
| Դասասենյակ N49 | 56,8 | 1,72 | -0,28 |
| Դասասենյակ N50 | 56,8 | 1,67 | -0,33 |

| | | | |
|----------------|------|------|-------|
| Դասասենյակ N51 | 56,8 | 1,83 | -0,17 |
| Դասասենյակ N52 | 36 | 1,5 | -0,5 |

Վերլուծություն.

Մակերեսի նորմեր. դպրոցի նախագծային հզորությունը/համակազմը՝ 960/ բավարարում է համապատասխան թվով սովորողներ ունենալու, գրեթե բոլոր դասասենյակներում ավելացվել են սեղան-նստարաններ: 1 սովորողի համար դասասենյակի մակերեսը սանիտարական նորմերին է համապատասխանում թիվ 5,6,13,16,36,45 կաբինետներում, մնացյալ կաբինետներում արձանագրվում է նորմայից շեղում, ինչը պայմանավորված է դասարաններում աշակերտների միջին խտությամբ, ինչպես նաև դասասենյակների մակերեսներով, ընդ որում հիմնական դպրոցում դասասենյակների մեծամասնության մակերեսը 53,4 քմ է, տարրականում՝ 56,8 քմ:

Լուսավորություն. Դասասենյակներում բնական լուսավորությունը ձախակողմյան է, խուլ միջնապատի առկայությամբ դասարաններում ապահովված է աջակողմյան լրացուցիչ ենթալուսավորում՝ լուսամփոփներ:

Նկատարում. Ուշադրություն պետք է դարձնել, եթե լյումինեսցենտային լամպեր են դասասենյակներում, ուսումնական կաբինետներում, լաբորատորիաներում, գործնական պարապմունքի սենքերում անհրաժեշտ են ուսումնական սեղանների վրա 300 լք լուսավորություն, շիկացման լամպերի դեպքում՝ 150 լք:

Բնական լուսավորման գործակիցը/FLQ/ պատուհանից դասասենյակների հեռավոր կետում կազմում է/2,5-3 միավոր/1,5%, շիկացման լամպերի դեպքում՝ 1,3%(լուսային խորշերին հակառակ պատից 1մ հեռավորության վրա): Որպես լավագույն արևապաշտպան միջոց պատուհանների փեղկերի միջև տեղադրված են վերամբարձ-շրջվող վարագույրներ /ժայռուզներ/, բացառված են պոլիվինիլքլորիդային/ՊՎՔ/ վարագույրների օգտագործումը: Դասասենյակները և առանձնասենյակները բնական լուսավորության մակարդակի իջեցումից զերծ պահելու նպատակով ծառերը տնկված են դպրոցի շենքից 10մ հեռավորությամբ, իսկ շենքի մոտ աճող ծառերը ճյուղահատվում են յուրաքանչյուր գարնանը: Լուսամփոփների անսարք լամպերը ժամանակին փոխվում են: Սովորողները չեն ներգրավվում նշված աշխատանքներին: Փչացած և այրված լյումինեսցենտ լամպերը հավաքվում են և մինչև հանձնումը պահվում երեխաների համար անհասանելի տեղում:

Արհեստական լուսավորում ունեն՝

- տարանցիկ/ռեկրեացիոն/ միջանցքները,
- դպրոցի լվացարանները,
- մարզադահլիճին կից հանդերձարանները,
- ճաշարանը,
- սանհանգույցները:

Ուշադրություն. մինևույն սենքում չի կարելի օգտագործել շիկացման և լյումինեսցենտ լամպեր : Հաստատության 1-4-րդ դասարանների համար գրատախտակի համար օգտագործվում են մուգ-կանաչ, մուգ-դարչնագույն գույնի ներկեր: Մարկերային գրատախտակները 1-4-րդ դասարաններում չեն

օգտագործվում, իսկ բարձր դասարաններում օգտագործման դեպքում մարկերի գույնը լինում է կոնտրաստային՝ սև, կապույտ, կարմիր, շագանակագույն և կանաչ գույների մուգ երանգներով միաժամանակ: Տեխնիկական միջոցներ օգտագործելու ժամանակ սովորողների սեղանի վրա լուսավորումը ոչ պակաս քան 300 լյուքս է, իսկ պրոյեկտորների օգտագործման ժամանակ սովորողների սեղանի վրա լուսավորումը ոչ պակաս քան 500 լյուքս է: ուստի անհրաժեշտ է լրացուցիչ լուսավորությամբ սարքերի դեպքում երեխաներին հեռու նստեցնել լուսավորման ուղիղ ճառագայթներից:

Հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ

Ներքոնշյալ 14 չափանիշների ամբողջությունը հիմք է հանդիսացել հաստատության ինքնավերլուծության հաշվետվության այս բաժինը կազմելու համար: Առավել ընդգրկուն և համակողմանի վերլուծություն կատարելու համար յուրաքանչյուր ցուցանիշին կամ չափանիշին անդրադարձ է կատարվել առանձին, այնուհետ՝ ընդհանրացվել են դրանք: Այս բաժնի վերլուծությունը կատարելիս ուսումնասիրվել են համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը, կատարվել դիտարկում-փաստագրում՝ ըստ առանձին ցուցանիշների կամ չափանիշների, կազմվել են նաև իրավիճակի ուսումնասիրման և արձանագրման հարցաշարեր և դրանց միջոցով կատարվել հարցումներ հաստատության սովորողների, ուսուցիչների և աշխատակազմի շրջանում: Ելնելով հարցերի բնույթից հարցումներ են կատարվել նաև ծնողների շրջանում՝ պատահական ընտրանքի մեթոդով:

Աղյուսակ 10Ա. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին

Դիտարկման ամսաթիվ՝ **15.06.2023թ.**

| Nº | Չափանիշը | Նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին, / գրել փաստաթղթի անվանումը և ընդունման ամսաթիվը , թվարկել առկա գույքը/ |
|-----------|--|---|
| 1. | Հաստատության աշխատակազմը և սովորողները տիրապետում են աղետների ժամանակ և արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: | Դպրոցի Զինղեկը, դասակի հրամանատարը պարբերաբար զեկուցել են դպրոցի ՔՊ միջոցառումների վերաբերյալ, առկա է գործողությունների ծրագիր և դրա վերահսկումը արտացոլված է դպրոցի ՆԴՎ տարեկան պլանում: Դպրոցի միջանցքներում պատերին և հատակին փակցվել են տարհանման ուղենիշներ: |
| 2. | Հաստատության աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: | Առկա են թվով ԱԿ-2 տիպի 5/հինգ/կրակմարիչներ և նոր տեղադրված 10/տասը/ հատ կրակմարիչներ, որոնք երաշխիքի մեջ են և տեղակայված են էլնելով դպրոցի պլան – հատակագծից , էլեկտրական վահանակները մեկուսացված են: Անվտանգության միջոցների օգտագործման կանոնները հրապարակային են , տեսանելի: Աշխատակազմը և սովորողները |

| | | |
|-----|--|--|
| | | տեղեկացված են, դրան նպաստում են դաստիարակական ժամերի ընթացքում իրազեկման և սահիկների միջոցով դրանց կիրառման կանոնների ուսուցանումը: |
| 3. | Տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ հաստատությունում իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ: | Հաստատության ուսումնադաստիարակչական տարեկան ծրագրի/պլան/ համաձայն իրագործվում են տարահանման միջոցառումներ, զինղեկը իր տարեկան պլանով սահմանված ժամկետներում իրագործել է իրազեկման գործնական միջոցառումներ: Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է բոլոր հարկերում գույքի ամրության աստիճանը, ճաղավանդակներ առկա չեն, ելքային դռները փակ են չունեն խանգարող իրեր, դրանց ընդհանուր մակերեսը և օգտագործվող մակերեսը: |
| 4. | Հաստատությունում առկա է աղետների պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանվածության պլան և ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են պլանի գործարկում և վարժանքներ, վարվում է գրանցամատյան: | ՔՊ պլանը առկա է հաստատված տնօրենի կողմից և ըստ պլանի են իրագործվում վարժանքները: Որպես հրավիրյալներ և գործընկերներ ՔՊ միջոցառումներին ներկա են եղել համայնքի ՏԿԱԻՆ մանագիտացված հրշեջ հանձնախմբեր: |
| 5. | Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով: | Այո, ջեռուցումը լոկալ է և անվտանգ, կաթսայատան սյունակաթսաները նորացված են և համապատասխանում են լոկալ ջեռուցման նախագծային հզորությանը: |
| 6. | Հաստատության բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: | Այո, բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, յուրաքանչյուր դասասենյակում կա ջերմաչափ և ամենօրյա ստուգումներ են կատարվում ջերմաստիճանային ռեժիմի վերաբերյալ: |
| 7. | Հաստատության միջանցքները ջեռուցվում են և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին: | Այո, համապատասխանում է |
| 8. | Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: | Այո, շուրջօրյա է |
| 9. | Հաստատության բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար: | Բոլոր մասնաշեքերում կան հիմնովին վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար: |
| 10. | Հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահովված են հիգիենայի պարագաներով (օձառով, թղթով և այլն): | Ջրամատակարարման ժամերին բոլոր սանհանգույցները անխափան գործում են, կան հիգիենայի պարագաներ: |
| 11. | Հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է | Այո |

| | | |
|-----|--|---|
| | հաշմանդամության տարբերանշանը: | |
| 12. | Հաստատությունում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանտարահիգիենիկ պայմաններին: | Այո, սննդի կետը լիովին ապահոված է սանիտարահիգիենիկ արդի պայմանների պահանջներով: |
| 13. | Հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ: | Այո, տարվում են նաև սննդի կետում սովորողների վարքագծի կանոնների իրազեկման և վերահսկման աշխատանքներ: |
| 14. | Հաստատությունում առկա է բուժկետ և կարող է տրամադրվել առաջին բուժօգնությունը: | Այո, բուժկետը ունի առաջին բուժօգնության միջոցներ՝ դեղորայք, պատգարակ, շարժական սանիտարական արկղիկ: |

Վերլուծություն. Ըստ հարցման արդյունքների հաստատության սովորողների 91%-ը և աշխատակազմի 97%-ը ծանոթ են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոնին, սովորողների 9%-ը՝ մասամբ են ծանոթ:

Եզրակացություն. Հաստատությունն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների մոտ ձևավորելու անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողություններ ու հմտություններ:

Առաջարկություն. Անհրաժեշտ է ելքային դրոները բաց պահել, եթե դրոները դասապրոցեսների ընթացքում փակ են, ապա անհրաժեշտ է փակ լինեն միայն ներսից հեշտ բացվող սողնակով: Գալիք ուստարվա ուսումնադաստիարակչական տարեկան զարգացման ծրագրում ներառել ԱՌՆ թեմաներով միջոցառումների, դասղեկական ժամերի և ինտեգրված դասերի թեմատիկա:

Աղյուսակ 10Բ. Տվյալներ տեղական փտանգների գնահատման և աղետների պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ

Փաստագրման ամսաթիվ՝ 27.06.2023թ.

| <i>Ամսաթիվը</i> | <i>Դասարանը</i> | <i>Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը</i> | <i>Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը</i> |
|------------------------|------------------------|---|---|
| 27.02.2023թ. | 5-9 | Մեմինար, պատահարների և իրադրությունների ժամանակ աշակերտների պահելաձևի, ինքնօգնության և փոխօգնության տեսական և գործնական հարցեր: | 532 |
| 06.12.2022թ | 1-4 | Դասղեկի ժամերի անցկացում, այնուհետև գործնական դաս՝ աշակերտների դուրս | 444 |

| | | | |
|--------------|-----|--|---------------|
| | | բերումը հաստատությունից մեկ ելքով:Դասի վերջում՝ դասվարների զեկույցը տնօրենին դուրս բերված աշակերտների քանակի և դուրս բերման ժամկետի արձանագրման մասին:Հարցում.<<Ինչպե՞ս գործել երկրաշարժի ժամանակ>>: | |
| 22.02.2023թ. | 5-9 | Սեմինար,պատահարների և իրադրությունների ժամանակ աշակերտների պահելաձևի,ինքնօգնության և փոխօգնության տեսական և գործնական հարցեր: | 532/փուլային/ |
| 07.12.2022թ. | 1-4 | Դասղեկի ժամերի անցկացում,այնուհետև գործնական դաս՝ աշակերտների դուրս բերումը հաստատությունից մեկ ապաստարանում:Դասի վերջում՝ դասվարների զեկույցը տնօրենին դուրս բերված աշակերտների քանակի և դուրս բերման ժամկետի արձանագրման մասին:Հարցում.<<Ինչպե՞ս գործելահազանգի ժամանակ>>: | 444/փուլային/ |

Վերլուծություն.Անցկացված միջոցառումների արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել են հարցումներ սովորողների և աշխատակազմի շրջանում:Աշխատակազմի 96%-ը և սովորողների 92%-ը ծանոթ են անվտանգության միջոցների/ել. վահանակ,հրշեջ տեղեկատու և այլն/ տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման ձևերին:

Առաջարկություն.Սովորողների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով գալիք ուսումնական տարվա ընթացքում կարելի է իրազեկման աշխատանքներում ընդգրկել աշակերտական խորհրդի կարգապահական և ուսումնական հանձնախմբերը՝ որպես օգնություն,ինչպես նաև ձևավորել և իրագործել միջոցառումների համատեղ պլան:

Աղյուսակ 10 Գ. Տվյալներ հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների վերաբերյալ

Փաստագրման ամսաթիվ՝ 06.06.2023թ.

| <i>Ամսաթիվը</i> | <i>Դասարանը</i> | <i>Միջոցառման/վարժանքի անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը</i> | <i>Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը</i> |
|------------------------|------------------------|---|---|
| 17.11.2022թ | 1-9 | Տարհանման ուսումնական փորձ: Տարհանում նախապես զգուշացմամբ՝ 8-9 դասարանների դասակների ուժերով՝ 1-9 դասարաններում:Օգտագործվել են հրշեջ | 967 |

| | | | |
|--------------|-----|--|-----|
| | | տեխնիկա, պատգարակ, աստիճանասայուն, ենթադրյալ տուժողին տրվել է առաջին բուժօգնություն: | |
| 21.11.2022թ. | 1-9 | Տարհանման ուսումնական վարժանք: Տարհանում առանց զգուշացման 8-9 դասարանների դասակների ուժերով՝ 1-9 դասարաններում: Օգտագործվել են հրշեջ տեխնիկա, պատգարակ, աստիճանասայուն, ենթադրյալ տուժողին տրվել է առաջին բուժօգնություն: | 967 |
| 01.03.2023թ. | 1-9 | Տարհանման ուսումնական փորձ: Տարհանում առանց զգուշացման 8-9 դասարանների դասակների ուժերով՝ 1-9 դասարաններում: | 967 |

Վերլուծություն. Անցկացված միջոցառումների և վարժանքների արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել են հարցումներ սովորողների և աշխատակիցների շրջանում, առկա է վարժանքների իրականացման ժամանակացույց, վարվում է «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգին»/Հավելված ՀՀ նախագահի 13 նոյեմբերի 2003 թվականի N 1532-Ն որոշման/ համապատասխան գրանցամատյան: Ուսումնական վարժանքների ընթացքում դժբախտ պատահարներ տեղի չեն ունեցել:

Ըստ հարցման արդյունքների հաստատության սովորողների 92%-ը և աշխատակազմի 96%-ը տեղյակ են, որ հաստատությունում կա ՔՊ պլան և այն իրագործվում է: Աշխատակազմի 96%-ի, ծնողների 98%-ի, սովորողների 92%-ի կարծիքով դպրոցը մշտապես նպաստում է սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության միջավայրի բարելավմանը:

Առաջարկություն. Արտադասարանական և արտադպրոցական ուսուցման կազմակերպման համար գալիք ուսումնական տարում հարկ է ԱԻ և ՔՊ միջոցառումների կազմակերպման ժամանակ կարևորել սովորողների բաժանումը տարիքային և այլ խմբերի, ուսուցման խնդիրների, եղանակների և ձևերի ճշտումը, գիտելիքների, հմտությունների և կարողությունների (պատահարի, ԱԻ-ի մասին իմացության, կանխարգելման ուղիներ, պահելաձևի կանոններ, գործնական կարողություններ, առաջին օգնության հմտություններ, վախերի հաղթահարում, տարրական անհրաժեշտ տեղեկություններ նորմատիվ-իրավական դաշտի մասին և այլն) առկա պաշարի և անհրաժեշտ նվազագույն պաշարի որոշումը: Ի վերջո, կարևորել վերը նշված նվազագույն պաշարի ստեղծումը սովորողների մոտ:

Աղյուսակ 11 Տվյալներ հաստատության ջեռուցման առկայության և տեսակի վերաբերյալ

| Ամսաթիվը | Դասասենյակները /համարը/ դահլիճները, այլ սենյակները միջանցքները | Ջեռուցման ձևը, /վառելիքի տեսակը/ | Ջերմաստիճանը այցի պահին | Ջեռուցման ժամերը |
|--|---|---|------------------------------------|-----------------------------|
| 25.11.2022 12.12.2022 26.12.2022 09.01.2023 16.01.2023 23.01.2023 06.02.2023 13.02.2023 27.02.2023 06.03.2023 13.03.2023 | Դասասենյակներ /բոլորը/ | լոկալ/բնական գազ/ | 20 °C | շուրջօրյա |
| 25.11.2022 12.12.2022 26.12.2022 09.01.2023 16.01.2023 23.01.2023 06.02.2023 13.02.2023 27.02.2023 06.03.2023 13.03.2023 | Գրադարան | լոկալ/բնական գազ/ | 18 °C | շուրջօրյա |
| 25.11.2022 12.12.2022 26.12.2022 09.01.2023 16.01.2023 23.01.2023 | Ուսուցչանոց 1,2 | լոկալ/բնական գազ/ | 18 °C | շուրջօրյա |

| | | | | |
|--------------------------|--------------------------|------------------------------|-------|-----------|
| 06.02.2023 | | | | |
| 13.02.2023 | | | | |
| 27.02.2023 | | | | |
| 06.03.2023 | | | | |
| 13.03.2023 | | | | |
| 25.11.2022 12.12.2022 | Բուժկետ | լոկալ/բնական գազ/էլ.սալիկ | 21 °C | շուրջօրյա |
| 26.12.2022 | | | | |
| 09.01.2023 | | | | |
| 16.01.2023 | | | | |
| 23.01.2023 | | | | |
| 06.02.2023 | | | | |
| 13.02.2023 | | | | |
| 27.02.2023 | | | | |
| 06.03.2023 | | | | |
| 13.03.2023 | | | | |
| 25.11.2022 12.12.2022 | 1-ին հարկի միջանցքներ | լոկալ/բնական գազ/ | 18 °C | շուրջօրյա |
| 26.12.2022 | | | | |
| 10.01.2023 | | | | |
| 16.01.2023 | | | | |
| 23.01.2023 | | | | |
| 06.02.2023 | | | | |
| 13.02.2023 | | | | |
| 22.02.2023 | | | | |
| 06.03.2023 | | | | |
| 13.03.2023 | | | | |
| 25.11.2022 12.12.2022 | 2-րդ հարկի միջանցքներ | լոկալ/բնական գազ/ | 18 °C | շուրջօրյա |
| 26.12.2022 | | | | |
| 09.01.2023 | | | | |
| 16.01.2023 | | | | |
| 23.01.2023 | | | | |
| 06.02.2023 | | | | |

| | | | | |
|--|-----------------------|-------------------|-------|-----------|
| 13.02.2023 | | | | |
| 27.02.2023 | | | | |
| 06.03.2023 | | | | |
| 13.03.2023 | | | | |
| 25.11.2022 12.12.2022 26.12.2022 09.01.2023 16.01.2023 23.01.2023 06.02.2023 13.02.2023 27.02.2023 06.03.2023 13.03.2023 | 3-րդ հարկի միջանցքներ | լոկալ/բնական գազ/ | 18 °C | շուրջօրյա |

Վերլուծություն. Հաստատությունն ապահովված է անվտանգ լոկալ ջեռուցման համակարգով: Բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, հաստատության ուսումնական սենքերը լիարժեք օդափոխվում են դասամիջոցներին, իսկ ռեկրեացիաները՝ դասերի ընթացքում: Ջեռուցման սեզոնին յուրաքանչյուր ամիսը 4 անգամ գրանցվում են դասասենյակների և մնացած բոլոր սենքերի ջերմաստիճանը: Դասերի ավարտից հետո և դասերից առաջ, ինչպես նաև առաջին ու երկրորդ հերթափոխերի միջև ընդմիջման ժամանակ կատարվում է սենքերի միջանցիկ օդափոխություն: Միջանցիկ օդափոխության տևողությունը որոշվում է ելնելով եղանակային պայմաններից և համապատասխանում է ԱՆ 2017 թվականի մայիսի 28-ի N12-Ն հրամանով սահմանված «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ հավելված 3-ում սահմանված պահանջներին: Հաստատության սենքերում ապահովվում է օդի հետևյալ ջերմաստիճանը. դասարաններում, ուսումնական կաբինետներում, գրադարանում, բուժկետում (բժշկի կաբինետ), մարզադահլիճի հանդերձարաններում, լաբորատորիաներում, հանդիսությունների դահլիճում՝ առնվազն 18-22 աստիճան ցելսիուս, նախասրահում, հանդերձարանում և ռեկրեացիաներում ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18 աստիճան ցելսիուս, իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան ցելսիուս: Հաստատության մարզադահլիճում դասերի ժամանակ 5 աստիճան ցելսիուսից բարձր արտաքին ջերմաստիճանի պայմաններում բացվում են մեկ-երկու պատուհան: Ավելի ցածր ջերմաստիճանի դեպքում, մարզադահլիճում պարապմունքներն անցկացվում են բաց օդանցքներով, իսկ միջանցիկ օդափոխությունը կատարվում է դասամիջոցների ժամանակ՝ սովորողների բացակայությամբ:

Աղյուսակ 12. Տվյալներ հաստատության ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղացման) առկայության և դրանց վիճակի վերաբերյալ

Դիտարկման ամսաթիվ՝ **24.08.2022թ.**

| Հաստատության ջրամատակարարումը | | | | | | |
|---|----------------------|---|---|--|---|---|
| Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով (ընդգծել այո կամ ոչ բառերը/ | | Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա | | Ապահովված չէ հոսող խմելու ջրով | | |
| Այո | | Օրեկան քանի՞ ժամ է ջրամատակարարումը | | Ինչպե՞ս է լուծվում ջրամատակարարման խնդիրը | | |
| <u>Ոչ</u> | | 16 ժամ | | Ջրամատակարարումը համընկնում է դպրոցի աշխատանքային ժամերի հետ | | |
| Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը | | | | | | |
| Շենքի հարկը | Սանհանգույցների թիվը | Աղջիկների սան-հանգույցի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Տղաների սան-հանգույցի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Հարմարեցվածությունը <i>հաշմանդամություն</i> ունեցող անձանց հարմար (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) |
| 1-ին հարկ | 8 | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ |
| 2-րդ հարկ | 8 | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ | <u>Այո</u> Ոչ | Այո <u>Ոչ</u> | <u>Այո</u> Ոչ |

Վերլուծություն. Սանհանգույցները առկա են տարրական և հիմնական մասնաշենքերի 1-ին և 2-րդ հարկերում, դրանք հիմնովին վերանորոգված են արդի պահանջներին համապատասխան և ապահովված են անհրաժեշտ հիգիենայի պարագաներով: Սանհանգույցներից մեկը հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց հարմար՝ ռետուրս սենյակում: Հաստատության սենյերում ամեն օր

իրականացվում է ընթացիկ խոնավ մաքրում, իսկ ամիսը մեկ անգամ կատարվում է սենքերի հիմնական մաքրում: Հաստատությունում ախտահանման, միջատասպան և կրծողասպան աշխատանքները կազմակերպվում են համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված «Ախտահանման, կրծողասպան և միջատասպան աշխատանքների կազմակերպման, իրականացման և աշխատողների առողջության պահպանման» թիվ N 2.2.5-003-05 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների: Աղբի կոնտեյները տեղադրված են ջրանթափանց, բարեկարգ մակերեսով տարածքում դպրոցից դուրս/նորմը՝ հաստատության շենքից ոչ պակաս, քան 15մ հեռավորության վրա/:

Նկատարում. 1/քանի որ դպրոցում տարեցտարի ավելանում են ԿԱՊԿՈւ երեխաներ, ուստի անհրաժեշտ է հաշմանդամ երեխաների սանհանգույցների հարմարության անհրաժեշտություն նաև 2-3-րդ հարկերում, միջնորդել տնօրինությանը միջոցներ ձեռնարկել նաև այդ ուղղությամբ:

2/ԱՆ 2017 թվականի մայիսի 28-ի N12-Ն հրամանով սահմանված «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ 29-րդ կետի համաձայն անհրաժեշտ է նաև զուգարանների սենքերի լուսամուտների օդանցքները ցանցապատել՝ միջատներից զերծ լինելու նպատակով:

3/ Դասասենյակներում ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար եզրային շարքերում նստած երեխաներին անհրաժեշտ է փոխել տեղերով՝ պահպանելով հասակային առանձնահատկություններին համապատասխան նստեցումը:

4/Ուսումնական սենքերի կահավորման ժամանակ պահպանվել է կահույքի և նստարանների կամ սեղանների միջև անցումների չափսերն ու պատերից հեռավորությունը համաձայն ԱՆ 2017 թվականի մայիսի 28-ի N12-Ն հրամանով սահմանված «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ 38-րդ կետի/ցանկը և նորմերը բերված են/

- 1) երկտեղանի սեղանների շարքերի միջև՝ առնվազն 60,
- 2) սեղանների շարքի և արտաքին պատի միջև՝ 70,
- 4) սովորողների հետևի սեղանների և պատերի միջև՝ 100,
- 5) սովորողների հետևի սեղանների և պատերի միջև, եթե պատերի տակ շարվում են պահարաններ և/կամ կախիչներ՝ 140,
- 6) ցուցադրական սեղանից մինչև սովորողների սեղանները՝ 60,
